ասէիս, մենք Երևանը մէջ բերինք, միայն օրինակի համար: Հայերը ամեն տեղ միևնոյնն են, այն զանազանութեամբ, որ տեղ-տեղ մեղմ, և տեղ-տեղ խիստ աչքի ընկնող: Երևանի նման բոլոր նահանգների քաղաքները իբրեանց գաւառների կեդրոնն են, իսկ Տփխիս բոլոր նահանգական քաղաքների մայրաքաղաքն է:

—Գաւառական քաղաքներում մանաւանդ շատ է պատահում տեսնել ծերունիներին, որոնք մի պատի տակին հաւաքված, յիշում են իբրեանց ժամանակակից հասարակական անցքերը, վերջ ի վերջոյ դոցա ձախորդ վերջաւորութեանց վերայ կանգնելով եղրակացութեան համար ասում են այն նշանաւոր խօսքը, որ չը կայ մի հայ, որ ասած, կամ լսած չը լինէր այն թէ «հայերը անմիաբան են, անմիաբան են եղել, անմիաբան էլ կը լինին»: Ես էլ այժմս նոյն ծերունիների դրութեան մէջն եմ գտնվում և նրանց հետ միասին բամբասում եմ ազգը:

Ծերունիների խօսքերը շատ անողոք բնաւորութիւն ունին. նորանց կարծիքով, այդ անմիաբանութիւն ասված բանը հայերի կաշուն անբաժանելի կպած սևութիւնը լինի, որ նորա հետ միասին դոյացել է արգանդում և նորա հետ միասին աշխարհի վերայ երևացել է:

Ես այն ամենին յայտնի միտքն եմ կրկնում, որ աշխարհումը առանց պատճառի ոչինչ չէ եղել. եթէ